

ԳՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԵՐԼԻՆԳՐԱՅԻՄ

Զ. Ա. ՀԱՅԱԴՈՐԾԱՆ, Վ. Ա. ՓՈԹԵՑԱՆ

ՌՈՒՍ-ՀԱՅԵՐԵՆ ՊՈԼԻՏԵՍԻԿԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆՆԻ ՄԱՍԻՆ
ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ԳՐԱՆՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԹՎ

Ավելի քան մեկ տարի առաջ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակությունը լույս տեսավ Ռուս-հայերեն պոլիտեխնիկական բառարանը, որն առաջինն է իր տեսակի մեջ*: Բառարանը մեծ հետաքրքրություն առաջացրեց ուսպուլիկայի տեխնիկական ինտելիգենցիայի շրջաններում, քանի որ նրա կարիքը վաղուց էր գեղացվում: Բառարանի մասին մինչև այժմ հրապարակված է արդեն հինգ գրախոսական, որոնց մեջ, նրա արժանիքների և թերությունների քննարկման կապակցությամբ, շոշափվում են հայերեն տեխնիկական անբաժնորոշիկ զարգացման համար էական նշանակություն ունեցող մի շարք հարցեր: Անհրաժեշտ ենք համարում կանգ առնել զբաղվող կարևորագույնների վրա, բառարանի կրկրորդ հրատարակության ժամանակ հաշվի առնելու համար:

Նախ, Ռ. Հ. Մանուկյանի համարյա նույնությամբ կրկնվող երկու հոդվածների մասին, որոնք լույս են տեսել «Գրական թերթի» 1958 թ. ապրիլի 6-ի համարում և ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի «Տեղեկագրում» (Տեխնիկական գիտությունների սերիա, XI, № 3, 1958 թ.): Թեև «Տեղեկագրի» հենց նույն համարում մի ալլ գրախոս՝ Լ. Վ. Շահումյարյանը, առանց բանավեճի մեջ մտնելու Մանուկյանի հետ, խոսելով Պոլիտեխնիկական բառարանի մասին ընդհանրապես, օրելիություններն հերքում է Մանուկյանի հիմնական գրություններն ու կարծիքները, այնուամենայնիվ, մեր կողմից անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ նրա հոդվածներին:

Մանուկյանն առարկում է анализ բառը երկու ձևով թարգմանելու դեմ՝ վերլուծություն և անալիզ, ըստ որում առաջին ձևը բառարանում հատկացված է բառի վերացական իմաստին, օրինակ՝ մաթեմատիկայի մեջ, իսկ երկրորդը՝ նյութականին, օրինակ՝ քիմիայի մեջ: Մանուկյանը պահանջում է բոլոր դեպքերում էլ գործածել վերլուծություն բառը, չհասկանալով, որ դրանով նա աղքատացնում է հայոց լեզուն: Քիմիական անալիզ արտահայտությունը արդեն մտել է մեր լեզվի մեջ, նույնիսկ կենցաղի մեջ, և պահանջել այն փոխել քիմիական վերլուծությամբ՝ անհեթեթություն է:

Եթե գրախոսը ուշադիր լիներ, ապա նա կնկատեր, որ բառարանում սա միակ դեպքը չէ, երբ օտար (գլխավորապես միջազգային) տերմինի հայերեն թարգմանության կողքին տրվում է նաև օտար բառը՝ իմաստային տարբերությամբ: Այսպես, օրինակ, концентрация տերմինը տրված է երկու ձևով

* Ռուս-հայերեն պոլիտեխնիկական բառարան: Կողմեց մասնագետների կոլեկտիվը: Մշակեցին և խմբագրեցին՝ Ռ. Տ. Ախշարով, Զ. Ա. Հաջագործյան, Վ. Ա. Փոթեյան: Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչություն, Երևան, 1957:

կենտրոնացում (օրինակ՝ լարումների կենտրոնացում մեխանիկայի մեջ) և կոնցենտրացիա (օրինակ՝ լուծույթի). КОНТУР բառը իր երկրաչափական իմաստով թարգմանված է եզրագիծ, ուրվագիծ, իսկ ռադիոտեխնիկական իմաստով՝ կոնտուր: Акустика-ն ձայնագիտությունն է, բայց չի կարելի ասել դահլիճի ձայնագիտություն, ուստի այդ իմաստի համար թողնված է՝ ակուստիկա: Шлюз տերմինի համար տրված է իմաստներով տարբերվող երեք ձև՝ ջրարգելակ, անցախուց, շլուղ (նավերի անցման կառուցվածք), որոնցից միայն վերջինն է կրկնում միջազգայինը: Марка-ն սովորական իմաստով գրողմանիչ է, բայց միջին կարելի էր ասել բետոնի գրողմանիչ: Երկրաչափական խորանարդ տերմինի կողքին տրված է նաև ռուսական կուր ձևը՝ կաթսայի իմաստով: Այսպիսի օրինակների թիվը կարելի էր մեծացնել, բայց այսքանն էլ բավական է ցույց տալու համար, որ գրախոսի մոտեցումը սխալ է և մակերեսային:

Այս կապակցությամբ խորհուրդ կտալինք քննադատ Մանուկյանին կարգալ պրոֆ. Գ. Սևակի «Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց» գրքի հետևվյալ տողերը (էջ 139)։

«Մի շարք հայկական տերմինների հետ և նրանց զուգահեռ սկսեցին գործածվել նաև միջազգային տերմինները, և դեռ չի կարելի ասել, թե նրանցից որն է գերակշռում ու հաղթանակում... Երբեմն հայկական ձևը վերածվում է միջազգային բառի մի հոմանիշի և ստանում իմաստի որոշ նեղացում, օրինակ... լսարան նշանակում է միայն սենյակ-լսարան, իսկ ռեկտորների իմաստով գործածվում է աուդիտորիա, դասընթաց նշանակում է միայն դասավանդվող դիսցիպլին, ձեռնարկ, իսկ կուրս գործածվում է դասարան և այլ իմաստներով: Այս երևույթի միանգամայն գլխավան արդյունքն այն է, որ հայոց լեզուն ավելի հարուստ և ղառուժ, քան նույնիսկ այդ միջազգային բառերի հեղինակ և փոխառու լեզուները: (Ընդգծումը մերն է—Չ. Հ. և Վ. Փ.): Այսպես «են գոհ եմ իմ դասընթացից» և «են գոհ եմ իմ կուրսից» արտահայտությունները այլ լեզուները պետք է կազմեն միեւնույն կուրս բառով. նույնը և այլ գեպքերում»։

Այսպիսով, տեսնում ենք, որ բառարանում ընդունված վերոհիշյալ սկզբունքը բնորոշ է ոչ միայն տեխնիկական տերմինաբանության, այլև ընդհանրապես ժամանակակից հայոց լեզվի համար: Եվ դա, իրոք, հարատևացնում է մեր լեզուն, մինչդեռ Մանուկյանը կարծում է, թե դա «կիջեցնի մեր լեզուն դեպի վարդաքանի ավելի ցածր աստիճանը»։

Մանուկյանը լուրջ հայտարարության կարգով բնորոշում է, որ լեզուն ստեղծում է ժողովուրդը, սակայն հենց այս տեսակետից նրա առարկությունը пролёт բառի դիֆերենցիալ թարգմանությունն զեմ, որի մեջ օգտագործված են ժողովրդական բառերը, հակասում է ձեական հայտարարությունը։

Նախ, Մանուկյանը չի հասկանում, որ пролёт բառի մեջ лёт արմատի իմաստը մեռել է և չի գիտակցվում. ուստի այդ բառի բռնիք թարգմանությունը մի այնպիսի կուրյոզ է, ինչպիսին կլինեն, եթե մի բժիշկ налёт (на языке) թարգմաններ մակաթուհիք (լեզվի վրայի), փոխանակ վաղուց ընդունված ու հանրաժանով փառ բառի։

Թռիչք տառացի և անճիշտ թարգմանությունն փոխարեն բառարանում տրված է հեկամեջ միանգամայն հասկանալի հայերեն տերմինը։ Միաժամանակ բերված են մի քանի այլ ձևեր, որոնք ժողովրդական են և կիրառելի

որոշ կոնկրետ գեպքերում՝ լինք (կամարի), աչք (կամրջի) և ալյն։ Այնուհետև բառարանում արված է նույն տերմինի մի բոլորովին այլ իմաստը՝ կանգամեջ (տրանսպորտի կանգառների միջև ընկած տարածությունը), որ համահնչուն է հեկամեջին և լիովին արտահայտում է տերմինի տվյալ նշանակությունը։ Օրինակների մեջ բացահայտվում է տերմինի ճիշտ գործածությունը, զրանց թվում բերվում է մի ախպիսի հակիրճ թարգմանություն, ինչպիսին է հեծամեմեջ, որ փոխարինում է ուսաներն երեք բառից կազմված կապակցությունը՝ пролёт между балками.

Հայերեն կենդանի լեզվում դարավոր գործածություն ունի կամրջի աչքը, որն ընդունվել է գրական լեզվի մեջ և մտել է ախպիսի բառարանների մեջ, ինչպես «Խաղմական բառարանը» (Մ. Արեգյան), «Երկաթուղային տերմինների բառարանը» (Ստ. Մալխասյանց), երկհատոր (1935 թ.) և քառահատոր (1957 թ.) ընդհանուր բառարանները։ Իմ ահա, մի անդիսցիպլինար միտք, մի անզգույշ ձևաք, ստրկանալով ուսաներն բառի տառերին, թարգմանել է կամրջի թոխք, և հաջոց լեզվին անհրաժեշտ չափով չտիրապետող մի երկու տասնյակ մասնագետներ գործածում են տերմինի այդ ազավաղված թարգմանությունը։

Եթե մեր քննադատի ճաշակով և պահանջներով ուսաներն բառերի տառացի թարգմանությունները խրախուսվեն, ապա հայերենից պետք է վտարվի ձեք բառը, որի փոխարեն համառորեն գրում են բուսական յուղ (растительное масло) և ձեթի շշերի պիտակների միջոցով տարածում, կամ օղի բաշելու (թորելու) փոխարեն պետք է ասենք օղի ծխել (курение водки), ինչպես անում են որոշ մասնագետներ, անզրապիտացնելով իրենց ցանցի աշխատակիցներին։

Մանուկյանը առարկում է նաև հետևյալ տերմինների դեմ, որոնք մինչև բառարանի լույս տեսնելը այլ կերպ էին թարգմանվում.

անխզովի հեծան — неразрезная балка, նախկին չխզված հեծանի փոխարեն.

կիսաքարքնովի գամ — полупотайная заклёпка, կիսաքարքնված գամի փոխարեն.

քարքնալիխիկ — потайная головка, թաքնված գլխիկի փոխարեն։

Մի՞թե պարզ չէ, որ երկրորդ (գերբայական) ձևերը ընդհանրացնող տերմին չեն ստեղծում. արդ նույնն է, եթե հավաքովի կոնստրուկցիաներ տերմինային կապակցության փոխարեն գործածենք հավաքվող կոնստրուկցիաներ, ինչպես առաջներում սխալմամբ գործածում էին որոշ մասնագետներ։

Եթե մինչև այժմ жаростойкий տերմինը թարգմանվել է ջերմակայուն, ինչպես հաժաոտում է գրախոսը, ապա դա ոչ միայն սխալ է, այլև կարող է թյուրիմացությունների տեղիք տալ, որովհետև այդ ձևը համապատասխանում է теплостойкий տերմինին, որ միանգամայն այլ իմաստ ունի։ Ուշագիշտ լինելու գեպքում կարելի էր նկատել, որ բառարանում բաղմամբի տերմինների մեջ тепло արմատը թարգմանվել է ջերմ, жар-ը՝ կրակ, իսկ огонь-ը՝ կուր։ Այսպես ստեղծվել է տերմինների կանոնավոր ու հետևողական մի շարք՝ огнестойкий—հրակայուն, огнеупорный—հրահետ, жаростойкий—կրակակայուն, жароупорный—կրակահետ, теплостойкий—ջերմակայուն, теплопроводный—ջերմահաղորդ, теплопроницаемый—ջերմաթափանցիկ և այլն։ Չնկատել այս բոլորը՝ նշանակում է չհասկանալ հենց այն

կոնկրետ ծառայությունը, որ բառարանը մատուցում է տեխնիկական տերմինոլոգիայի ճշմամբ ու կարգավորման գործին:

Նույնքան անհիմն է առարկությունը սառցարկ (ледокол) տերմինի դեմ. ճիշտ է, մինչև այժմ այդ տերմինը թարգմանվել է սառցահալ, բայց բաբելոնյան քննադատը չէր կարող չնկատել, որ բառարանում հենց այդ բառից անմիջապես հետո գալիս է ледорез բառը, որն իր ճիշտ թարգմանությունն է պահանջում, իսկ միակ ճիշտ թարգմանությունն է սառցահալ (резать — հատել, կտրել): Բառարանի հեղինակները պարտավոր էին զանազանել նալի այդ երկու տեսակները, որոնցից մեկը կոտրում է սառույցը, իսկ մյուսը կտրում. հետևաբար անհրաժեշտ էր կազմել նոր բառ, ինչպես և արվել է:

Ոչ միայն ձևով, այլև իմաստով կոպիտ սխալ պետք է համարել сплав տերմինի համաձուլվածք թարգմանությունը: Сплав-ը երկու և ավելի մարմինների խառնուրդն է, որ ստացվում է նրանց միասին հալելուց, և ոչ մի կապ չունի ձուլվածք հասկացության հետ, որը հալած մարմին կազապարման միջոցով նոր ձև տալու արդյունքն է. հետևաբար сплав-ի միակ ճիշտ թարգմանությունը կարող էր լինել միահալվածք: Ուղղակի անհասկանալի է, թե ինչպես կարող էր Մանուկյանը այսպես անհուսալի կերպով շփոթել плавка (плавление) և литье բոլորովին տարբեր պրոցեսները:

Նույն ձևով մի քննադատը շփոթում է груз և нагрузка բառերի իմաստները և պահանջում, որ нагрузка-ն թարգմանվի լեռ, այն ժամանակ, երբ դա груз բառի միանգամայն ճիշտ թարգմանությունն է. այս անհրաժեշտ դիֆերենցումը Մանուկյանը բացատրում է Վեդամ բոլոր տերմինները փոխելու ձգտումով, իսկ մենք կարծում ենք, որ տերմինների այդպիսի շփոթումը արդյունք է Մանուկյանի ամեն ինչ «քննադատելու» ցանկությունից:

Нормальный տերմինը բառարանում թարգմանված է մի քանի իմաստներով. 1. նորմալ (սովորական), 2. մթ. նորմալային (ուղղահայաց), 3. մթ. նորմալական (լսա նորմալի): Մանուկյանը պահանջում է բոլոր այս իմաստները տալ մի բառով՝ նորմալ, որ կաղքատացնել լեզուն և կստեղծի տերմինների իմաստային երանգների շփոթություն: Օտար բառերի «ալ» վերջավորությամբ ածականին հայկական «ալին» կամ «ական» ածանց ավելացնելը բնավ խորթ չէ հայերենին, ինչպես ունենք՝ վասալային, ֆեոդալական և այլն: Մեր քննադատի տրամաբանությամբ հայերենում չպետք է կազմվեր իդեալական ածականը, քանի որ ֆրանսերենում idéal ձևը արդեն ածական է:

Удлинение և укорочение տերմինները բառարանում արված են ճշգրտված ձևով՝ չեզոք և ներգործական իմաստներով՝ երկարում և երկարացում, կարճում և կարճացում: Մանուկյանը դեմ է երկարում և կարճում նոր տերմիններին, որոնք նրա անհիմն կարծիքով սխալ են... մինչդեռ սխալ է հենց նրա այդ «կարծիքը», որովհետև, относительно удлинение չեզոք պրոցես է. կառուցվածքի կամ մեքենայի մեջ որևէ մի տարր բեռնվածքի տակ երկարում է առանց մարդու միջամտության, հետևաբար այստեղ չի կարելի թարգմանել երկարացում, որ նշանակում է երկարացնելու չափը, այլ միայն երկարում, այսինքն՝ ինչքան է նա բեռնվածքի տակ երկարել:

Դարձյալ տերմինների իմաստների շփոթություն, որ գալիս է սխալ պրակտիկայից. хрупкий թարգմանված է բեկուն, սարթ: Մանուկյանը պահանջում է թարգմանել փխրուճ, որ ուսերեն рыхлый ածականի համազորն է: Խոսակցական լեզվում хрупкий բառը երբեմն ունի փոխոր, փխրուն իմաս-

տը (օրինակ хрупкий снег կապակցության մեջ), բայց դա չի համապատասխանում տեխնիկական տեքմիկին, և անհանդուրժելի սխալ կլիներ, օրինակ, хрупкое стекло թարգմանել փխրուն ապակի, քանի որ ապակին կարող է լինել միայն բեկուն (շուտ կոտրվող):

Մանուկյանը հաջող չի համարում մի շարք բառերի թարգմանությունը և առաջարկում է այլ ձևով թարգմանել: Նա առաջարկում է армировка տեղիքը թարգմանել ոչ թե ամրանալորում, ինչպես տրված է բառարանում (ամրան — арматура բառից), այլ երկաթալորում: Հարկ կա հիմնավորելու, թե ինչպիսի կուրյոզ կատարվիր, եթե նրա առաջարկած ձևով թարգմանվիր, օրինակ, армировка деревом (կամ камышом) կապակցությունը, այսինքն փայտով կամ եղեգնով երկաթալորում...

Այնուհետև, նա գտնում է, որ сечение բառը շինարարական մեխանիկային վերաբերող տեքմիկներում պետք է թարգմանել կարվածք և ոչ թե հատվածք: Բառարանում կտրվածք բառով թարգմանված է разрез բառը և ոչ մի հարկ չկա շփոթել այդ երկու տեքմիկները:

Գրախոսը չի ընդունում сварка բառի եռ ք թարգմանությունը, իր կողմից ոչինչ չի առաջարկում, սակայն նշում է, որ մասնագետների մեծ մասը (*) այդ տեքմիկն թարգմանում է զոդում, և ինքն էլ ափսոսանքով է, որ այդ паяние բառի թարգմանությունն է: Մասնագիտական բառարանը հակասած կլիներ իր հիմնական սկզբունքին, եթե երկու բուլղոլիկն տարբեր իմաստ ունեցող տեքմիկն մեկ բառով թարգմաներ: Նշենք, որ մեր մասնագիտական լավագույն բառարանը՝ Շինարարական կառուցվածքների բառարանը (Հր. Աճառյանի, Արշ. Տոնյանի և ուրիշն.) сварка թարգմանել է եռ ք, նույն բառարանը, Ռազմական (Մ. Արեղյանի) և Երկաթուղային տեքմիկների բառարանը (Ստ. Մալխասյանցի) сварить թարգմանել են եռ ք — այդ, իհարկե, մեր քրննադատին ոչինչ չի ասում, ոչնչի չի պարտավորեցնում... Եվ, ի վերջո, ինչո՞վ է վատ եռքը. այդ բանը զոդանիք է մնում:

Մանուկյանը, չբավարարվելով առանձին բառերի առթիվ իր «խիստ» դիտողություններով, փորձում է ընդհանրացումներ կատարել: Ահա մի նմուշ. «Ինչպես հայտնի է, արմատը բառի անխոփոխ մասն է: Բայց, ըստ երևույթի, բոլորի կողմից ընդունված այս դրույթը բառարան կազմողները համարել են սխալ: Այդ պատճառով նրանք усилитель, ускоритель, успокоитель բառերի՝ մինչև այժմ կիրառվող ուժեղացուցիչ, արագացուցիչ, հանգրգուցուցիչ թարգմանությունները փոխարինել են ուժեղարար, արագարար, հանգստարար սխալ թարգմանություններով: Ի՞նչ կապ ունի քերականական այդ անհաջող էքսկուրսը բերված օրինակների հետ: Երկրորդ, մեր ժլգովագետի» կարծիքով այդ ածականների արմատներն են ուժեղացնել, արագացնել և հանգստացնել բայերը և ոչ թե ուժեղ, արագ և հանգիստ բառերը, որոնցից և պետք է կազմվեն բոլոր ածանցական բառաձևերը: Եվ, երրորդ, լեզվի տարրական ճաշակից զուրկ պետք է լինել ուժեղարար, արագարար և հանգստարար սահուն, գլուրարտասանելի բառաձևերի հետ նույնիսկ համեմատության գնելու համար ուժեղացուցիչ, արագացուցիչ և հանգստացուցիչ բառերը: Ըստ երևույթի, Մանուկյանի կարծիքով, «արար» վերջավորությունը բառերը միայն մարդկանց մասին են կիրառելի: Ասենք թե մինչև այժմ նրան անձանոթ են եղել կենաբան (գաղափար), առողջարար (օդ), փրկարար (ուժ) և նման բաղմամբով բառերը, բայց մի՞թե նրա հիշողությունից իսպառ

դուրս են մղվել դեռ աշակերտական հասակում սովորած բաժանարար և հայտարար թվաբանական տերմինները: Իր այդ անհիմն դիտողությունը հիմնավորելու համար, Մանուկյանը հեգնորեն բացականչում է. «Ղեկավարվելով բառարանը մշակողների սկզբունքներով, մենք ստիպված կլինենք ուսուցիչ բառը փոխարինել ուսարարով, ներկայացուցիչ բառը ներկարարով և այլն»: Սքանչելի արամբարանություն, որով եթե ղեկավարվենք, պետք է այսուհետև բաժանարարը դարձնենք բաժանիչ, հայտարարը՝ հայտիչ, հաշտարարը՝ հաշտիչ... Ինչ վերաբերում է այն բանին, որ քննադատը ներկա կամ ներկայացնել թառերից «արար» վերջածանցով (թեկուզ պալմանականորեն) կազմում է «ներկարար» բառը, ապա Մանուկյանի հայացիտական մտքի այդ զոհարը ինքնին շատ բան է ասում, ատանց մեկնարանությունների: Հենց այս պատճառով էլ մենք կանգ չենք առնում այն բառերի ու կապակցությունների վրա, որոնց ասթիվ Մանուկյանը զուտ լեզվական-քերականական բնույթի գատողություններ է անում:

Բալարարվենք, բերելով ևս մի օրինակ: Մանուկյանը անաշարկում է центрально-сжатый элемент կապակցությունը թարգմանել կենտրոնական սեղմված տարր՝ բառարանում տրված կենտրոնականեղմված տարրի փոխարեն: Երկուսից մեկը՝ կամ նա չի հասկանում տերմինի իմաստը, նույնացնելով այն центральный сжатый элемент կապակցության հետ, կամ չի տիրապետում հայերենի տարրական քերականությանը:

Որոշ դեպքերում մեր քննադատի դիտողությունները մոտենում են փաստերի գիտակցական խեղաթյուրման: Այսպես, подшипник качения радиально-упорный կապակցության մեջ радиально բառի թարգմանությունը տպագրական վրիպակի հետևանքով տպվել է շարժա... Մանուկյանն այդ համարում է ոչ բարեխիղճ վերաբերմունքի արդյունք այն ժամանակ, երբ այդ և հաջորդ երկու էջում առանկալիս անգամ տպված է ճիշտ ձևով (շառավղաչին): Կարո՞ղ էր բառարանի թերությունները խոշորացույցով դիտող Մանուկյանը նկատած չլինել այդ:

Заклепка двухсрезная պետք է լինի երկկարածք գամ, բայց բառարանում սխալմամբ տպված է երկկարվածք. այդ բանը դժվար չէր ստուգել, նայելով բառարանում срез բառի թարգմանությունը (կարածք):

Нагель բառը թարգմանված է փայտամեխ, բայց դրա կողքին տրված են նաև բլեռ և կեռաբլեռ նշանակությունները համապատասխան դեպքերի համար: Քննադատը գիտակցաբար անտեսելով այդ բառերը կեղծ զարմանքով բացականչում է. «Բառարանը կաղմողները... ինչպես կթարգմանեն стальной цилиндрический нагель արտահայտությունը: Եթե Մանուկյանն իրոք այդքան անճարակ է, պատասխանենք՝ «պողպատե զլանան րեռն»:

Չգտելով ցույց տալ, որ բառարանում բաց են թողնված շատ կարեփոր տերմիններ, Մանուկյանը հայտարարում է, թե չի տրված скалывающее напряжение տերմինի թարգմանությունը: Յույց տանք քննադատին 200-րդ էջում իր փնտրածը՝ напряжение скалывающее—հերձող (սահքի) լարում:

Տեղի սահմանափակության պատճառով կանգ չենք առնում Մանուկյանի մյուս դիտողությունների վրա, որոնց ճնշող մեծամասնությունը նույնքան արատավոր է, որքան և մասնանշվածները: Չենք ժխտում, որ անուշադրության հետևանքով բառարանում ֆուսյել են վրիպակներ, կան և անհետեղականություններ տվյալ տերմինի հետ կապված տարրեր կապակցություն-

ներում, թերևս նաև առանձին սխալներ, որոնք պետք է ուղղվեն բառարանը վերահրատարակելիս:

Բայց ահա մի այլ քննադատ՝ կոնստրուկտոր Ջ. Ավագյանը: Սա Հայ-էլեկտրագործարանի բաղմատիրած «Էլեկտրամեքենաշինարար» թերթում (24 մարտի, 1958 թ.) «Մի քանի դիտողություններ» վերնագիրը կրող հոդվածում հանդես է գալիս լեզվական-բառարանագրական հարցերի վերաբերյալ անհեթեթ մտքերով ու տեսակետներով:

Բառարանում белила-ն թարգմանված է սպիտակ, ինչպես կարելի է կարգալ չորս մասնագիտական բառարաններում. Ավագյանը կռպիտ սխալ է համարում այդ, որովհետև սպիտակը ածական է, իսկ белила-ն գոյական, ճեռակարար նրանք համազոր բառեր չեն»... Սակայն բոլորին հայտնի է, որ հայերեն ածականների մի ստվար մասը գոյականաբար է գործածվում և դարձել է գոյական: Ավագյանը մեղ բացատրում է, որ верстак-ը դադարի չէ, որովհետև դադարը ափելի շուտ հաստոցն է՝ այն ժամանակ, երբ խոսակցական լեզվում տիրող այդ սխալը վաղուց վերացված է և դիտա-տեխնիկական տեղմիջոցներում հաստոցը ընդունված է բացառապես որպես станок բառի համարժեքը: Դադարձ բառի համար Ավագյանը հրամցնում է «բանկալի» շինծու, անգործածական բառը...

Сварка տեղմիջի համար մեր քննադատը հանձնարարում է հետևյալ բառը, «որը դարեր ի վեր (ուշում է ասել դարերից ի վեր) եղել է հայերենում»: Այս բառը Ավագյանը կարդացել է Սա. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանում», բայց չի նկատել նրանից առաջ գրված համապատասխան նշանը, որ ասում է, թե բառը հնացած է և գործածելի չէ: Եվ որ հատկանշական է, քննադատը ուղղում է միաժամանակ նաև Մալխասյանցին, քանի որ ինքը Մալխասյանցը сварить թարգմանել է եռացում (Երկաթուղային տեղմիջների բառարանում): Сварка բառի մի հատուկ իմաստով համար, որպես եռացրած տեղը, բառարանը տալիս է երեք. Ավագյանը չի ընդունում այդ, որը, դիտելով ինչ, թարգմանելով գործածվող թուրքական ուլ վերջամասնիկով թխված «գերբայ» է... Քանի՞ հաղար բառ հայերենից պետք է դուրս գցել որպես ուլ վերջածանցով թխված «գերբայներ»: Նույնպիսի ակտիվությունը Ավագյանը պաշտարում է բառարանում նոր կազմված ալ վերջածանցով բառերի դեմ, որովհետև այդ վերջածանցը «տարածված է պահլավերենում»: Այսպիսի տրամաբանությունը զեկալարվելու դեպքում հայերենից պետք է վտարվելին այնպիսի բառեր, ինչպես բլրակ, գլուղակ, գերծակ, փալակ, կայծակ բառերը՝ և նույնիսկ լույս ու ջերմություն սփռող արեգակը... որպես պահլավերեն վերջածանցով կազմված բառեր:

Оптический ածականը բառարանում տրված է օպտիկական թարգմանությունով. Ավագյանը դարձյալ «ուղղում է» և առաջարկում նրա համազորը՝ օպտիկական. դրեք այդ բառից հետո, օրինակ завод բառը և կստանաք օպտիկական գործարան անհեթեթությունը: Допуск տեղմիջը բառարանում թարգմանված է քույլովածք: Ավագյանը վերադասելի է համարում հայերենում «իրոք գոյություն ունեցող համազորը» — տացք, և որը որպես թեկա մեռահայերեն նոր բառարանում (1935 թ.): Բայց երբ անում այդ բառարանը (1 հատ.) և 457 էջում կարդում ենք որպես допуск բառի 2-րդ նշանակությունը քույլալարի թերաչափս. իսկ որտեղ է տացք բառը. նույն բա-

սարսնի 397 էջում նա բերված է որպես дача II (выдача) բառի թարգմանություն, որպես տվչություն, տալը բառերի հոմանիշ: Աւրին Ավագյանը կամ գիտակցարար աղավաղում է փաստերը, կամ բառարանները ճիշտ կարգաւ անգամ չգիտե:

Թե՛ մասնագիտական և թե՛ ընդհանուր բնույթի բոլոր բառարաններում мрамор բառի միակ անվիճելի թարգմանությունն է մարմար, մարմարիոն, որը և գործածական է գրական ու խոսակցական լեզվում. թվում էր, թե ոչ մի մարդ փորձ չէր անի սրտ զեմ առարկել, բայց Ավագյանը այստեղ ևս ուզում է իր «հալագիտությունը» ցուցաբերել և պահանջում է մարմար բառը, որպես «սխալ բառ», փոխարինել կուն բառով:

Մատնանշենք, վերջապես, ևս մի խիստ բնորոշ օրինակ: Ավագյանն անընդունելի է համարում, շինծու է անվանում պտուտակիչ բառը որպես отвёртка բառի թարգմանություն: Այս բառը այդպես էլ թարգմանված է վերը մատնանշված բոլոր բառարաններում, պտուտակահան, զարմուճակ հոմանիշների հետ: Ավագյանը չի ճանաչում ոչ մի հեղինակություն և կատեգորիկ ձևով պահանջում է թարգմանել «փխչեան» ալլանդակ ու կասկածելի բառով: Ավագյանը բառարանում նոր ստեղծված տերմինների մասին գրում է. «Նման ստեղծագործություններն ավելորդ են և ստեղծում են խառնաշփոթություն»: Երկուսն էլ տառապում են հայագետի հավակնությամբ. երեւի այդ պատճառով էլ Ավագյանը խոտանում է ակ և ուկ վերջածանցով հայերեն բառերը, Մանուկյանի գրչի տակ ներկա, ներկայացնել բառերից կազմվում է ներկարար գոյականը, Ավագյանը նույն բառը (ուրեմն, նաև ազմուկ, միջուկ, ծերուկ բառերը) համարում է «ղերբալ», իսկ Մանուկյանը իրարից չի տարբերում չեղոք և ներգործական բայանունների իմաստները... Իրենց գիտցածից դուրս ոչինչ չընդունելու մտայնությամբ, Մանուկյանը զարավոր կիրառում ունեցող ալք (կամրջի) բառը մերժում և կամուրջներն օժտում է «թռչելու» ընդունակությամբ (пролёт թռիչք), իսկ Ավագյանը հեղինակավոր առնով հալոնում է, որ ազամանդը ոչ թե ալմաստ է, այլ бриллиант, առանց իմանալու, որ դրանք միեւնույն անուններն են, փոխառված տարբեր լեզուներից, իսկ վերջին բառի համար հայերենում վաղուց ունենք շողակն բառը: Երկու քննադատներն էլ լեզվաշինարարության բնագավառում հաշվի չեն առնում ալլապիսի աղբյուրներ (բառարաններ), որոնց հեղինակներն են Ստ. Մալխասյանցը, Մ. Աբեղյանը, Ն. Աճառյանը, Արշ. Տոնյանը և այլն, մինչդեռ երկուսի հոգվածներն էլ ցույց են տալիս, թե որքա՞ն մեծ կարիք ունեն հենց նրանք այդ բառարաններից սովորելու:

ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագրի տեխնիկական գիտությունների սերիայի 1958 թ. № 3-ում տպագրված «Պոլիտեխնիկական բառարանի մասին» գրախոսականում Լ. Վ. Շահաումարյանը հանգամանորեն վերլուծել է բառարանի մտցրած ավանդը մեր տեխնիկական տերմինոլոգիայի մեջ, գրական գնահատական տալով նրան: Հոգվածագիրը մանրամասն օրինակներով ցույց է տալիս, թե բառարան կազմողները և մշակող-խմբագիրները ինչպիսի ստեղծագործական աշխատանք են կատարել հայերեն տեխնիկական տերմինները սխառնավորելու, ճշտելու, միեւնույն տերմինի տարբեր իմաստները բացահայտելու և պակասող բաղմաթիվ տերմինները լրացնելու նպատակով նոր տերմիններ կազմելու ուղղությամբ: Գրախոսը նշում է նաև մի քանի տերմինների, իր կարծիքով, անճիշտ թարգմանությունը: Բայց բերած երեք օրինակից երկուսը

պարզապես տպագրական սխալներ են, որոնք ցույց են տրված վրիպակների ցանկում, իսկ երրորդը՝ сложалость տերմինի թարգմանությունը պառկապրն-դուրյուն (պառկած լինելուց պնդացածություն) գուցե ալիքան հաջող՝ բարենշուն չէ, բայց սխալ չի կարող համարվել: Համաձայն ենք Լ. Շահում-վարյանի այն դիտողությունների հետ, թե բառարանը պետք է լրացնել նոր տերմիններով և տերմինների լրացուցիչ նշանակություններով: Ճիշտ է նաև, որ անհրաժեշտ է տերմինի մի քանի նշանակությունները հիմնավորել օրինակ-ներով: Անտամենայնիվ, չի կարելի համաձայնել գրախոսի հետ, թե պոլի-տեխնիկական բառարանը պետք է պարունակի ալիպիսի սովորական բառեր, ինչպես изготовление, проскальзывание և այլն, որոնք կան ամեն մի ընդ-հանուր բառարանում:

Անհրաժեշտ է կանգ առնել նաև ՀՍՍՄ Գիտությունների ակադեմիայի «Տեղեկագիր» քիմիական գիտությունների սերիայի 1958 թ. XI հ., № 4-ում տպագրված՝ Վ. Դ. Ազատյանի գրախոսականի վրա, որը հիմնականում վերա-բերում է քիմիական տերմիններին, և հենց այդ պատճառով էլ մնում է ան-հասկանալի, թե ինչպես այդ տերմինների քննադատի դերում հանդես է գալիս Պոլիտեխնիկական բառարանի քիմիական տերմինների հանձնաժողովի նախա-գահ Վ. Ազատյանը... Հետագայում, բառարանը տպագրության հանձնելուց առաջ, այդ տերմինները վերանայվել, ճշտվել են ՀՍՍՄ ԳԱ Քիմիական ին-ստիտուտի կողմից (որտեղ, ի դեպ, աշխատում է ինքը Ազատյանը): Ուստի և նա իր դիտողությունները քիմիալի գծով քառաբանում տեղ գտած սխալների, վրիպումների և այլ թերությունների՝ մասին պետք է ուղղել որ թե Պոլի-տեխնիկական բառարանի խմբագիր-մշակողներին, որոնք որպես թե Վրիպ չեն կատարել իրենց գործը», այլ անմիջապես ինստիտուտին, սակայն նա գերադասել է ընթանալ նվազագույն զիմպրովիզյան գծով և այդ թերություն-ները վերագրել մշակող-խմբագիրներին: Այս իսկ պատճառով, մենք անհրա-ժեշտ չենք համարում ըստ էության քննարկել Ազատյանի այդ դիտողու-թյունները, հիմնական վեճը համարելով Քիմիական ինստիտուտի և իր աշ-խատակի միջև ծագած մասնագիտական վեճ: Թող ինստիտուտը, և թե հարկ կհամարի, այս առթիվ ասի իր խոսքը:

Սակայն Ազատյանը հայտարարում է, որ բառարանն ունի նաև ընդհանուր բնույթի «մի շարք լուրջ թերություններ», «միանգամայն սխալ են թարգման-ված բազմաթիվ տերմիններ»: Թվում էր, թե այդ պատասխանատու, ծան-րակշիռ հայտարարություններին պետք է հաջորդեին կոնկրետ, համոզիչ օրի-նակներ:

Որո՞նք են այդ «լուրջ թերություններն ու սխալներն» ըստ Ազատյանի:

Առաջինը, որի վրա կանգ է առնում գրախոսը, տերմինների կիրառման բնագավառների մատնանշումն է: Ըստ երևույթին, նա ուշագրություն չի դարձրել ալի հանդամանքի վրա, որ բառարանում նշումներ չեն գրված ալի դեպքերում, երբ տերմինն ընդհանուր է մի քանի մասնագիտությունների համար կամ շատ զործածական է, ինչպես калория, мрамор, троллейбус, конус, призма և այլն: Իհարկե, այդ պայմանական է և որոշ դեպքերում կա-րող է վիճելի լինել, թե երբ անհրաժեշտ է նշումներ անել և երբ ոչ: Բայց հարցնենք Ազատյանից՝ ինչո՞ւ ուսերին բացատրական բառարանում սու-սերին арфа բառի դեմ փակագծում նշված է муз. (կրաժա.), իսկ гитара, гармоника նույնպես կրաժառական զործիքների համար ալիպիսի նշում չի

արված: Винт բառի գործածության բնագավառը չի ցույց տրված, բայց га́й-ка-ի համար նշված է *мех.* (տեխնիկա) և այլն: Միթե ներքևի էր մեր տեխնիկական տերմինոլոգիայի զարգացման իսկապես լուրջ խնդիրները թողած գրադվել այսպիսի մանր-մունր հարցերով: Կամ ի՞նչ մեծ հանցանք են գործել բառարանի հեղինակները, եթե прокаливание, бюретка, ступка և նման մի քանի տերմիններ վերագրել են քիմիային, пикнометр ֆիզիկային, температура застывания մեքենաշինությանը, сгорание неполное ավառմոքիլային գործին, электролиз էլեկտրատեխնիկային և այլն, թեև չի կարելի ժխտել այդ տերմինների գործածությունը նաև այլ մասնագիտություններում:

Սակայն անցնենք մեր քննադատի ավելի «լուրջ» գիտողություններին: Ազատյանը գտնում է, որ серная кислота-ն պետք է թարգմանել միայն ծծմբական քրու, իսկ բառարանում գրա կոչքին տրված է նաև ծծմբաքրու ձևը, որպես հոմանիշ, որը ոչ մի թյուրիմացություն չի առաջացնում, քանի որ сернистая кислота-ն տրվում է միայն ծծմբային քրու ձևով: Նույնը վերաբերում է նաև ֆոսֆորաքրու, ազոտաքրու և նման բառերին: Հասկանալի է, որ այդ կարճ ձևերը շատ հարմար են արտագրության մեջ գործածելու տեսակետից: Քիմիական տերմինների մեջ թվական նախամասնիկները (ըստ Ազատյանի՝ նախդիրները) տրված են հայերեն և լատիներեն ձևերով՝ եռաքլորիդ—տրիքլորիդ, քառաքլորիդ—տետրաքլորիդ և այլն: Խմբագիրները հնարավոր չեն համարել վերջնական ընտրություն կատարել այդ երկու ձևերի միջև, թողնելով, որ կյանքը կատարի այդ ընտրությունը: Այս հարցը Ազատյանին թվում է շատ պարզ, և նա առանց վարանելու պահանջում է, որ բոլոր թվական նախամասնիկները թարգմանվեն հայերեն. սակայն ի՞նչ կատարվեք, եթե օրինակ, պոլի թվական նախածանցը անպայման տրվեք հայերեն բազմա ձևով, այդ դեպքում հարկ կլինեք փոխել հենց այս բառարանի վերնագիրը և պոլիտեխնիկականի փոխարեն գրել բազմատեխնիկական... հազի՛վ թե համաձայն լինի զրան մեր գրախոսը: Հետևողական լինելու դեպքում Ազատյանը պետք է պահանջեք, որ քիմիական տերմինների մեջ գործածվող մյուս նախամասնիկները ես, ինչպես պելլ, իիպո, քիո թարգմանվին հայերեն, բայց նա խոհեմաբար այդ չի պահանջում: Ազատյանը անհաջող կամ սխալ է համարում фольга բառի թարգմանությունը՝ մետաղաթաղանք, առաջարկելով մետաղաթերթ, որը բոլորովին այլ բան է՝ металлический лист. Строение вещества—նյութի կազմության փոխարեն նա առաջարկում է կառուցվածք, որ հիմնականում նշանակում է сооружение. Грунтовые воды—գետնաջրեր թարգմանության փոխարեն առաջարկում է ստորերկրյա ջրեր, որ подземные воды կապակցության ճիշտ թարգմանությունն է, և այլն: Այդ և նման առարկությունները ցույց են տալիս, որ Ազատյանի ընդհանրացնող որակումները բառարանի «լուրջ թերությունների» մասին, միանգամայն անհիմն են:

Իհարկե, Ազատյանի գրախոսականում կան նաև ճիշտ գիտողություններ, որոնք վերաբերում են բառարանում ընդունված սկզբունքները ոչ բոլոր դեպքերում հետևողականորեն կիրառելուն: Օրինակ, բարդությունները մեծ մասամբ կազմված են ա հոդակապով, բայց որոշ դեպքերում մնացել է ո հոդակապը, երբեմն էլ բառերը բարդված են առանց հոդակապի: Կամ, ասենք, са-хар բառի կապակցությունը ածականի հետ որոշ դեպքերում թարգմանված է բարդ բառով (պտղաշաքար), այլ դեպքերում՝ երկու բառով (խաղողի

շաքար): Ազատյանը չպետք է մոռանար, որ լեզուն մաթեմատիկա կամ մեխանիկա չէ, այստեղ բացարձակապես անխախտ կանոններ չկան, ուստի և թույլատրելի չէ արաֆարեստալին մոտեցումը շոշափովոյ հարցերին: Կարո՞ղ է արգելոք նա մեզ բացատրել կամ հիմնավորել, թե ինչու հայերենում միևնույն արմատից որոշ բարդությունները կազմվում են հոդակապով՝ ակա-նասես, ջրաչափ, փայտահատ, օրապահիկ և այլն, ալլ բարդություններ՝ առանց հոդակապի՝ ակնդես, ջրհան, փայտփոր, օրհաս և այլն: Կարելի է այստեղ նկատել անհետևողականություն, բայց ոչ երբեք «սխալ»:

Ալլ դեպքերում Ազատյանի լեզվական ըմբռնումներն ալլաքան էլ հստակ չեն և դավաճանում են նրան: Այսպես, дезодорация տերմինը բառարանում թարգմանված է հոտաչնջում՝ պրակտիկայում հանդիպող հոտազրկում սխալ բառի փոխարեն: Ազատյանը տուրք է տալիս հենց սխալ պրակտիկային, այն ժամանակ, երբ այս և նման բառերում բարդությունը երկրորդ մասը՝ զրկում բառը արամաքանական լյապսուս է: Կարելի է զրկել այն բանից, ինչ ցանկալի է, ինչի ստեղծությունը անհրաժեշտ է, ինչպես՝ բավականությունից զրկել, միջոցներից, իրավունքից զրկել և այլն: Իսկ բացասական, վատ բանից չեն զրկում, ալլ դրանք ոչնչացնում, ջնջում, վերացնում են. անհեթեթություն է ասել՝ կեղտից զրկել, չքավորությունից զրկել, բռնությունից զրկել, ուստի և նույնքան անհեթեթություն է ասել՝ վատ հոտից զրկել, քանի որ дезодорация նշանակում է վատ հոտի ոչնչացում (уничтожение, устранение дурного запаха):

Պոլիտեխնիկական բառարանի գրախոսները շեշտում են բառարանը լրացնելու անհրաժեշտությունը, որը ոչ ոք չի կարող ժխտել: Այս նպատակով պետք է տեսական, մանրակրկիտ աշխատանք կատարել, որի համար անհրաժեշտ է գործի ներգրավել տարբեր մասնագիտությունների տեր, երկու լեզվին, առաջին հերթին՝ հայերենին կատարելապես տիրապետող ձևոճառ անձանց: Այստեղ հարկ ենք համարում ասել, որ, ինչպես այս բառարանի փորձը ցույց տվեց, ստեղծվող հանձնաժողովների կամ նրանց անդամների քանակը չէ, որ ապահովում է մասնագիտական բառարանի որակը, ալլ մասնագետների լեզվական կուլտուրան, ճաշակն ու ստեղծագործական կարողությունը: Պետք է պարզ ու որոշակի ասել, որ մեր մասնագետներից շատերը շփոթում են բացատրական-ծափալուն և երկկեզվյան-թարգմանական բառարանների բնույթն ու առանձնահատկությունները, գերադնահատում են մասնագիտական հանձնաժողովների դերը, մոռանալով, որ ամեն մի երկկեզվյան բառարան կազմելը հիմնականում լեզվաստեղծագործական աշխատանք է, ուստի և ավել լեզվին լիովին տիրապետելը այստեղ վճռողական նշանակություն ունի:

Մենք ես գտնում ենք, որ պոլիտեխնիկական լիակատար բառարանի նախապատրաստման աշխատանքը ղեկավարելու համար անհրաժեշտ է ՀՍՍՌ ԳԱ Տեխնիկական գիտությունների բաժանմունքին կամ մի ալլ ղեկավար օրգանին կից հիմնել ալլ աշխատանքները կազմակերպող ու ղեկավարող մի միակցուն հանձնաժողով: